04.08.2016
Ե-2454

Երևանի քաղաքապետ

Տարոն Մարգարյանին

Պարոն քաղաքապետ

Ինչպես հայտնի է, սույն թվականի հուլիսի 17-ին Սասնա ծռեր խմբավորման կողմից ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի շենքը գրավելուց անմիջապես հետո Երևանում տեղի ունեցան բողոքի ակցիաներ ու երթեր՝ ի սատարումն նրանց և նրանց կողմից բարձրացված պահանջների: Ամենօրյա խաղաղ հավաքները ընթանում էին ոստիկանական ուժերի ու քաղաքացիական համազգեստով ինչ-որ անձանց հետ բախումներով, քանզի վերջիններիս կողմից արվում էին ամենինչ, որպեսզի խափանվեն այդ խաղաղ հավաքներն ու երթերը:

Զանգվածային լրատվամիջոցները և մենք արձանագրել ենք, որ ՀՀ ոստիկանությունը և այդ քաղաքացիական համազգեստով անձինք, 2016թ. հուլիսի 29-ի երեկոյան ծեծի են ենթարկել խաղաղ հավաքի մասնակիցներին, հարձակումներ իրականացրել խաղաղ հավաքը լուսաբանող լրագրողների վրա, բռնության ենթարկել նրանց՝ հասցնելով մարմնական վնասվածքներ, կոտրել նրանց տեսախցիկները, այսպիսով, խոչընդոտելով նրանց մասնագիտական գործունեությանը:

Արդեն մի քանի օր է սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվական միջոցներով շրջանառվում է այն տեղեկությունը, ըստ որի 2016թ. հուլիսի 29-ի ուշ երեկոյան Երևանի Խորենացի փողոցում և Սարի Թաղում խաղաղ հավաքի մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնություն իրականացրած քաղաքացիական համազգեստով անձանց շարքում են եղել նաև Երևանի քաղաքապետարանի որոշ աշխատակիցներ և ԺԷԿ-ի պետեր: Երևանի քաղաքապետարանի որոշ աշխատակիցների մասնակցության փաստի մասին նյութերը հրապարակվել են www.mamul.am առցանց լրատվական կայքում՝ http://www.mamul.am/am/news/88733/, http://m.mamul.am/am/news/88787:

Բացի այդ, որպես ամբողջական նյութ կարող եք դիտել «Ազատություն ռադիոկայան»-ի և «Ա1+»-ի կողմից այդ օրերին ուղիղ եթեր հեռարձակվող տեսանյութերը, մասնավորապես՝ http://www.azatutyun.am/a/27889000.html, https://www.youtube.com/watch?v=I2geRcDIWUI:

Սակայն, ի զարմանս մեզ, առ այսօր Երևանի քաղաքապետարանը հանդես չի եկել պաշտոնական հայտարարությամբ, չի հերքել կամ չի հաստատել այդ տեղեկությունը կամ որևէ քայլ չի ձեռնարկել այդ անձանց բացահայտելու և պատասխանատվության կանչելու ուղղությամբ:

Հետևաբար, սույնով դիմելով Ձեզ, ակնկալում եմ ստանալ նախևառաջ Ձեր պաշտոնական տեսակետը այս հրապարակումների վերաբերյալ, և երկրորդ՝ եթե դրանք համապատասխանում են իրականությանը, ապա Դուք, իբրև Երևանի քաղաքապետ, պետք է անհապաղ քայլեր ձեռնարկեք նրանց պատասխանատվության կանչելու ուղղությամբ:

Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն